

Մատթեոս 16:15,16 (Matthew 16:15,16)

«Ո՞վ կ'ըսէ՞ Թէ եմ»

Վեր. Ստեփան Մնջերեան

Հայ Աւետարանական Գողգոթա Եկեղեցի 11.10.02

Կարդանք Մատթեոս 16երորդ գլխուն 15,16 համարները: Յիսուս հրաշքներ կը գործեր, Աստուծոյ թագաւորութիւնը կը փարոզէր, առաւել՝ փարիսեցիներուն հարցումները կը պատասխանէր: Ժողովուրդը կը հետեւէր Յիսուսի, մեծ ակնկալութեամբ: Շատեր կը խորհէին թէ Յիսուս եղիան էր, ուրիշներ կըսէին թէ Յովհաննէս մկրտիչն էր, անձ մը որ Մեսիանն առաջ պիտի գար: Մաս մը կըսէր թէ մեծ մարգարէ մըն էր:

Մատթեոս 16:15երորդ համարին մէջ Յիսուս կը հարցնէ իր աշակերտներուն ըսելով *«Դու՞ք ինձի համար ո՞վ կըսէ՞ք թէ եմ:»* Եւ 16երորդ համարին մէջ Սիմոն Պետրոս պատասխան տուաւ ու ըսաւ. *«Դուն ես Քրիստոսը, կենդանի Աստուծոյ Որդին»:*

Երբ մեր կեանքին նայելին, նաեւ մեր փորձարութիւններուն, արդիօք մեզի համար ին՞չ կը նշանակէ թէ Յիսուս, Քրիստոս է, եւ կենդանի Աստուծոյ որդին:

Առաջին - Յիսուս Քրիստոսն է - օծուած Աստուծոյ կողմէ, որպէս մեր Փրկիչը:

1646ին, Rembrandt նկարեց հովիւներուն պաշտամունքի նկարը. Այդ կը ներկայացնէ պարզ Բեթլեհէմի մտւրի տեսարանը: Մարիամ, Յովսէփ եւ Յիսուս մանուկը: Հովիւները մտւրին չորս կողմը: Մտւրին ետեւը Rembrandt նկարած է աստիճան մը որուն շուրջին մէջ խաչ մը կերելի: Ափոր մը կայ գերանին վրայ որուն աստիճանը կը յենի՝ - նշան մը Պետրոսի ուրացումին: Լոյսը որ կը լուսաւորէ տեսարանը կուգայ մտւրէն - այսինքն Յիսուս մանուկէն:

Rembrandt կը ներկայացնէ Ծնունդը՝ այսինքն փրկութեան պատմութիւնը՝ ուր կը տեսնենք խաչելութիւնը որ Յիսուս մանուկ պիտի դիմագրաւէր: Ան պիտի ըլլար Փրկիչ եւ ազատարար աշխարհի: Հոս կը տեսնենք թէ ո՞վ է Քրիստոս մարդկութեան յոյսը, լոյսը՝ խաւարին մէջ: Աստուած օծեց Յիսուսը որպէսզի մեր մեղքերը փրկէ եւ ըլլայ մեր Փրկիչը:

Երկրորդ - Յիսուս կենդանի Աստուծոյ որդին է:

Մարդ մը բժիշկին կերթայ եւ 3 ցաւեր կը ներկայացնէ: Կոկորդի ցաւ, ձայն ականջին մէջ եւ գլխապտոյտ: Բժիշկը կուտայ դեղ՝ չ'օգնէր. գործողութիւն կընէ մէկէ աւելի, նորէն չ'օգնէր: Արձակուրդի կը դրկէ:

Որով այս մարդը արձակուրդի կերթայ - Cancun, Mexico. Հոս շապիկ մը ուզեց գնել: Վաճառորդը հարցուց թէ ինչ էր վզին չափը - այս մարդը ըսաւ, «14½»:

Վաճառորդը ըսաւ «16"ը կարծեմ աւելի լաւ պիտի ըլլայ»:

Բայց մարդը ըսաւ, «Ես միշտ 14½" հագած եմ»:

Վաճառորդը ըսաւ - «Եթէ 14½" շապիկ գնես եւ ոչ թէ 16" շատ հաւանական է որ կոկորդի ցաւ ունենաս, ձայն լսես ականջիդ մէջ եւ գլխապտոյտ ունենաս»:

Այսօր նոյնը կը պատահի աշխարհի մէջ: Միշտ խնդիրներ ունինք: Եւ միշտ լուծում ունինք՝ թէ քաղաքական, թէ հոգեբանական, թէ տնտեսական:

Միշտ կը մոռնանք թէ Աստուած է որ կը լուծէ մեր խնդիրները: Աստուած ասօր համար դրկեց Իր Օծեալ Որդին աշխարհ՝ որ մեզ բուժէ, հանդարտեցնէ եւ մեզ մաքրէ մեղքէ:

«Ո՞վ կը խորհի՞ր թէ եմ» Էն կարելոր հարցումն է իւրաքանչիւրիս: Պէտք է պատասխան տանք: Ոչ՝ թէ փիլոսոփայական պատասխան կամ աստուածաբանական: Կարելի է գիտնալ Յիսուսի մասին, կրնանք ըլլալ կրօնական, նաեւ հոգեւոր, կրնանք եկեղեցի յանախել, նաեւ ծառայել, ըլլալ ընտիր անձ, բայց իսկապէս չնանչնալ Յիսուսը: Որովհետեւ Յիսուսը չենք նանչցած որպէս կենդանի Փրկիչ որ կ'ըսէ մեզի - «Քու կեանքդ ինծի վստահէ եւ ես քեզ մեղքէ կազատեմ»:

Աղօթք:

Այսօր Յիսուս քեզ կը հրաւիրէ որ ըսես, «Քեզի կուգամ, Աստուծոյ ընտրեալը, որ իմ Փրկիչս ըլլաս: Զիս ազատէ մեղքէ, կեանքս Քեզի կուտամ:» Սիրելի երկնաւոր Հայր, շնորհակալ եմք որ մեզ չես լքած: Շնորհակալ եմք Յիսուսի համար: Շնորհակալ եմք փրկութեան համար: Յիսուսի անունով՝ Ամէն: